

լսէ անոր հետեւեալ յայտարարութիւնը՝ թէ Պատրիարքութեանը 26 տարիներու ընթացքին իր մեծագոյն ցաւն եղած էր չկարենալ իրազործել եկեղեցական միութիւնը եւ անձամբ իր հպատակութիւնը յայտնել Մայրաքաղոյն Քահանայապետին: Գերպօժ. Գասպարինի, որ այս տեղեկութիւնը կու տայ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովին, կը յայտնէ նաեւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին եւ ուրիշ հայ եպիսկոպոսներու յարգալիբ վերաբերումը իրեն հանդէպ. երբ կաթողիկոսին յուղարկաւորութեան կը մասնակցէր, զինք կը հրաւիրեն լատին ծէսով հոգեհանգստեան պաշտօն կատարելու Հայրապետին դագաղին առջեւ (10):

Յակոբ Զուղայեցի կաթողիկէ հաւատքի դաւանութիւնը կը կատարէ ոչ միայն Գասպար Արքեպիսկոպոս Գասպարինիի առջեւ, այլ նաեւ ի ներկայութեան Կ. Պոլսոյ Յիսուսեանց Մեծաւորին, Հ. Տրանչիսկոս Կիլիի, Հ. Տրանչիսկոս Լեսդրենկանի, Թաղէոս Վրդ. Համազապիեանի (Համազասպեանի) եւ Սողոմոն Լեւոնեանի:

Դաւանագիրը հաւատարմութեամբ արտագրեցինք Հաւատոյ Տարածման Դիւանէն: Զայն նոյնութեամբ կը հրատարակենք.

«Ըստ անշուշտ եւ անհրաժեշտ եւ ամենանշմարիտ աւանդութեան Տեառն մերոյ

(10) Հ. Կարապետ Վ. Ամատունի, Բազմավէպ, 1949, ք. 7-9, էջ 72: